



ԵՐԿԱՆԻ ՇԱՀԱԶԻՋ

## ԳԵՎՈՐԳ ԴՈՒՈՒՅԱՆԸ

ԵՎ ՆՐԱ

„Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ“-Ը\*)



րա մոտ ընկեր Աղեքսանդր Ռոտինյանցը, յուր նրա մասին գրած համառոտ կենսագրական ակնարկներում, խոսում է այն մասին, որ Դոդոխյանի հառաջադեմ մարդ է եղել և կողմնակից եվրոպական առաջադեմ մտքերի ու գաղափարների հայերի մեծ տարածելուն ու միշտ էլ զանգատվել է, որ իր հայրենակիցները շատ պահպանողական են և չեն սիրում հառաջադիմություն ու ազատ մտքերի Հովհաննես Մպենգիարյանը, որ նրա մտերիմ բարեկամը լինելով, լավ էր ճանաչում նրան, իր վերոհիշյալ կենսագրականում հաղորդում է, որ Դոդոխ-

յանը մարտը, ազնիվ հայ լինելով հանդերձ, կատարյալ բարեկիրթ մարդ է եղել եվրոպական իմաստով ու նրա մասնավոր կենցաղավարության մեջ ախականությունը բացակայել է իսպառ. նա եվրոպացի է եղել բառիս բուն իմաստով:

Առաջադիմությունը սիրելու և պահպանողականության հակառակ լինելու արտահայտություն պետք է համարել հենց նրա Գրիգոր Արծրունու անմահ հիշատակին ձոնած ոտանավորը, որը նա գրել է վերջինիս մահվան առթիվ. Արծրունուն նա համարել է ազատության պաշտպան ու ազատ մտքերի քաղաղդ հայերի մեջ:

Հրապարակախոս անխռն,  
Ավաճ, տարածամ իջար գերեզման,  
Ո՛ր կողմը նայես՝ կսկիծ, ողբ ու սուգ,  
Աչեքեղ թափում է առատ արտասուք:

Մտավոր ուժովի անեկյալ ասպետ,  
Հավասարության սիրո վարդապետ,  
Անաչառ գործիչ, անկեղծ ազգասեր,  
Տառապյալներու միշտ պաշտպան ու տեր:

Անկեղծ բարեկամ դու բարեկամի,  
Հակառակորդաց ազնիվ բշնամի,  
Լույս գաղափարներ փրկարար, ազնիվ  
Քարոզում էիր դու ազգու բանիվ:

\*) Տես սկիզբը «ԷՋՄԻԱՆԻՆ» հունվար—փետրվար 1947 թ.:

Դու մաքանցիւր քան ու հինգ տարի  
Ընդդեմ շարժւոյն, բնդդեմ խաւարի  
Բարձր կրելով, անմոռա ց մշակ,  
Լուսավորւոյն սրբազան դրոշակ:

Լացեմ, ողբացեմ, հայ արքա ու կանայք,  
Ձեզ էր ետիրել նա յուր կյանք ու կայք,  
Իշով զերեզման պարծանքն ազգային,  
Ավա՛ղ ու եղու՛կ որբացյալ հային:

Ձէ, դու շնա մեռած, մեր անգին Մշակ,  
Անմոռանալի քո լույս հիշատակ  
Ձերմ երախտիքով լի սրտերուս մեջ  
Լիփայլի բնդմիշտ պայծառ ու անշէջ:

Քեզ փառք ու պատիվ  
Աստուծով կուգա օր երանակետ,  
Եվ քո ցանածը պտուղ բյուրավոր  
Տալով, հայ ազգին կանն բախտավոր:

Դոտրոխյանը հայութեան կենդանի տիպար  
է հանդիսացել. մինչև ծերութիւնը նա  
շրջելով հասարակութեան մեջ, իր կենդանի  
խոսքով ու քաղցր զրուցով հայութեանից  
կտրված այդ միջավայրում բոլորքն է ա-  
զատութեան ու հայրենիքի դադարւորը: Լավ  
եղանակներին երեկոնները միշտ նրան կա-  
րելի էր տեսնել քաղաքի ծառաշատ փողոց-  
ներում՝ ձեռնափայտի վրա հենված, համ-  
բարձր զրոտնելիս և սրա ու նրա հետ զրու-  
ցելիս հասարակական խնդիրների շուրջը:  
Նա սովորութիւն է ունեցել այդ պահերին  
զալ ու նստել Սեմերճյանի խանութի առաջ  
և հանգստանալ: Այդպիսի բուրքներին հայ  
հասարակութեան տարրեր խափերից մարդիկ  
զալիս ու շրջապատում էին նրան, որպէս-

զի լանն նրա կենդանի զրուցները հեռա-  
վոր հայրենիքի մասին, տեղական առօրյա  
կյանքի լավ ու վատ կողմերի մասին: Նը-  
րանք սիրում էին նրանից խորհուրդներ  
հաշտել, տեղեկութիւններ խմանալ ու նրա  
ցուցմունքներով այս կամ այն հասարակա-  
կան դործը կատարել:

Յուր կյանքի վերջին տարիները Դոտրո-  
խյանն անց է կացրել մեկուսացած, ամենից  
լքված ու մոռացված, քաղաքի խուլ ան-  
կյուններից մեկում, КЛАДОВИЩЕНСКАЯ УЛИЦА, մի  
թեկ խարխուլ, բայց ծառաշատ բակ ունեցող  
բնակարանում, ուր սովորաշատ ծառերի  
տակ նա սովորութիւն է ունեցել հանգստա-  
նալ և խորասուզվել տխուր մտքերի մեջ:  
Ահա նրա այդ ժամանակվա տխուր ու  
թախծալից մտքերի արձագանքները. —

#### ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ան տխրւոյն տիրեց սրտիս,  
Յավիս չի կա հար...  
Պիտ տանջուեմ մինչև ի մահ  
Այսպէս շարաշար:

Պիտ քափառեմ անմխիբար  
Թշուառ, միայնակ,  
Մինչև այն օրը, երբ կը բաղեն  
Ինձ սև հողի տակ:

Բաւերաւ մահ, դե՛, շուտ արի,  
Դիր ցավերիս վերջ,  
Ու խեղճ սիրտս հանգիստ գտնի  
Գերեզմանի մեջ:

Նրա միակ մխիթարութիւնն այդ ժամա-  
նակ եղել է յուր քրոջ Թովմուն զուտը՝  
Նուշիկը, որին նա որդեգրել և հայրենն թո-

թովել էր սովորեցրել: Նա չէր ամուսնացել  
և իր ողջ հայրական անքն ու գութը տվել էր  
այդ մանուկին, հայրաբար դուրգութալով,

խնամելով նրան: Դժբախտաբար նա շուտով զրկվել է և այդ միակ մխիթարանքից. մանուկը հանկարծ ծանր հիվանդացել է և նրա բոլոր ջանքերը, բուժելու, մահվան ճիւղին հասնելու, իզուր են անցել, ոչինչ չի օգնել: Երեխան վախճանվել է, 78 տարե-

կան ծերունուն թողնելով տառում, հուսահատ ու ողբերգական վիճակում: Դրանից հետո նրա միակ մխիթարությունը մնացել էր ամեն օր դողդոջուն ոտքերով, փայտի վրա հենված այցելել մանկան դերնզմանը, աղիողորմ հեծկտանքով փոփել գերեզմանաթմբի վրա և ողբալ իր դառն կորուստը:—

Տարածամ դրիճք սև հողի տակ,  
Իմ անգին նուշիկ, իմ փոքրիկ հրեշտակ,  
Գարնան ծաղկի պես քնքույր քացունցար  
Նվ ծաղկի պես էլ շուտ քառամեցար:

Երբ գա նոր գարուն, այնպես կը զարբնի,  
Կը ծաղկի քափը անճման վարդի,  
Կը գան ծիծեռնակ, կռունկ և սարյակ  
Սակայն չես զարթիլ, ալա՜դ, դու հոգյակ:

Շիրիմիդ վերա կուգամ միշտ լալու,  
Անդա՛րձ կորուստս դառը ողբալու  
Իսկ երբ որ դուսի օրերուս վախճան,  
Քո կողմիդ կը լինի և իմ գերեզման:

Այդպիսի էլ, այդ խաբխույթ, մեկուսացած բնակարանում, մեն-մենակ, 1908 թվի հունիսի 8-ի գիշերը, նա ավանդել է իր հոգին և ոչ ոք չի իմացել նրա մահը, մինչև իսկ նրա հարազատ եղբայր Օգոստոս Դոդոխյանը, որն իր ընտանիքով ապրելիս է եղել նույն բակում: Առաջնության միայն փակված դուռը բաց անելով,— ասում է Սպենդիարյանը,— գտել են նրա սառած դիակը՝ երկինք հասած աչքերով:

Անշուք հուղարկավորությամբ է թաղվել նա. հինգ-տաս մարդ միայն հետևել են նրա դագաղին դեպի հայոց գերեզմանոցը, որտեղ նրա մարմինը պահ են տվել հողին, նուշիկի կողքին:

Այսպիսի տխուր վախճան է ունեցել այն մարդը, որ ծնված է եղել կյանքի և ուրախության համար, միշտ սրտակից բարեկամներով ու ընկերներով շրջապատված լինելու, հասարակության գլուխգործոցն ու հարգանքը վայելելու համար, այն մարդը, որ Դոդոխյանի հայ ուսանողության ավանդանիսի, ազգային գրականության ու մտայնության վերջին ներկայացուցիչն է եղել\*): Դոդոխյանը ըստ ժամանակի վերջինն է ե-

ղել Դոդոխյանի հայ ուսանողության փառուն շարքի մեջ, բայց նա իր արժանիքներով հետինը չի եղել այդ փայլուն շարքը կազմող անձերի մեջ: Նրա հայ լեզուն ու ավանդությունները ափիլը, պահպանելը, տարածելը, հասարակական անշահախնդիր ու սրտացավ գործունեությունը կրթիչ ազդեցություն են ունեցել Ղրիմի հայ հասարակության վրա: Նա, իհարկե փայլուն տաղանդ չի հանդիսացել, բայց անքակտելի է իր եղել. նրա անունը, ճիշտ է, հաճախ չի երևացել մեր մամուլի էջերում. «Միծնեակ»-ը և մի երկու-երեք անգամ ոտավորներ հրատարակելուց հետո, նա այլևս հանդես չի եկել, բայց շարունակել է գրել, թող լինեն դրանք թվով սահմանափակ և որակով ոչ «Միծնեակ»: Իրեն դրողներին, որ տպագրել իր գրածները, նա միշտ համեստությամբ պատասխանել է, թե գրածներն այնպիսի բաներ չեն, որ «Միծնեակ»-ից հետո, արժանի լինեն տպագրության: Նա, կարծես, վախեցել է, որ ռեպրուտացիան իրեն թողել է և քնքն այլևս ի վիճակի չպիտի լինի «Միծնեակ»-ի արժանավորությամբ մի

\* Սիմֆերոպոլի հայ հասարակությունը, մի որոշ ժամանակ անցնելուց հետո, 1912 թվին միայն, հիշելով իր կորուստը և դատապարտելի անտարբեր վերաբերմունքը դեպի հանգուցյալը, ցանկանում է բավել յուր մեղքը: Միակն ժողով է դրամավում և որոշվում վայելուլ մահաբան կանգնեցնել բանաստեղծի գերեզմանի վրա: Որոշման արձանագրությունը հրապարակվում է լրագրերում, հրավերելով

բոլորին մասնակցելու: արձանի կանգնեցմանն ու նրա ձևի որոշմանը, քանի որ Դոդոխյանը պատկանել է ոչ միայն Սիմֆերոպոլին, այլ ողջ հայությանը: Մական վերահաս պատերազմի հետևանքով այդ դիմումը մնում է անարձագանք, իսկ հանգուցյալի գերեզմանն անհուշարժան, մատնված կորուստի: (Տես այս մասին «Մշակ», 1912 թ. № 22, 69, 131, 136):

նոր բան արտադրելու հսկ նրանց, որոնք պախարակել են նրան, ասելով թե մի «Ծիծեռնակ» է միայն գրել, նա հպարտությամբ պատասխանել է, թե ինքը, ճիշտ է, մի «Ծիծեռնակ» է գրել, բայց այդ «Ծիծեռնակ»-ը

երգվում է ամբողջ երեք միլիոն հայության մեջ։ Նա մինչև իսկ այդ «Ծիծեռնակ»-ին է ամանդել յուր հիշատակը հավերժ պահելու ազգի մեջ։—

Իմ քաղցրիկ ծիծեռնակ,  
Երբ ճեջեմ սառ հողի տակ,  
Դու պիտի պահպանես  
Ազգիս մեջ իմ հիշատակ\*):

Դոդոխյանը, բացի իր կենդանության օրով ու մահից հետո տպագրված հայտերի ուսանավորներից, գրական լեզվով ու Ղրիմի բարբառով գրել է հետևյալ ինքնուրույն ու

թարգմանական ուսանավորները, որոնց բընագիր սևագրությունները պահպանվել են նրա թղթերի մեջ։—

1. Աղուես և խալոզ (առակ, թարգմ. Կրիլովից)
2. ձանապարհորդներ (առակ, թարգմ. Կրիլովից)
3. Գայլ և գառն (առակ, թարգմ. Կրիլովից).
4. Օձ և ռամիկ (առակ, թարգմ. Կրիլովից).
5. Մոծակ և հովիվ (առակ, թարգմ. Կրիլովից).
6. Մադրալի ցանկություն (թարգմ. գերմաներենից).
7. Ողբ.
8. Գայլը և իր լակոտը (առակ, թարգմ. Կրիլովից).
9. Հան աղա, մեռնիմ պոյիկ (Ղրիմի բարբառով).
10. Անմխիբար այրի.
11. Փրկե մեզ Տեր.
12. Կոուեկի պատասխանը.
13. Տեր-բաբա (Ղրիմի բարբառով).
14. Նվեր բարեկամիս հիշատակին.
15. Մարգարե (լեռմոնտովի).
16. Գարուն.
17. Մեկ տղա կար.
18. Վեիո.
19. Տիե-տիե, տան-տին (Ղրիմի բարբառով).
20. Նոր սերունդ.

Այդ անտիպ մնացած գրվածքները, ինչպես երևում է նրանց տակը նշանակված տարեթվերից, գրված ու թարգմանված են մի մասը Դոդոխյանում 1859—60 թվականներին, իսկ մյուս մասն էլ Սիմֆերոպոլում զանազան ժամանակներ։ Դրանց մի մասը մշակված է, իսկ մյուս մասը, մանավանդ թարգմանությունները, մնացել են անմշակ ու կիսամշակ։

Այդ գրվածքները մեծ մասամբ տեղական կյանքից առնված լինելով, տեղական էլ բընույթ ունեն և դրանց մեջ շատ քիչ բան կա, որ ընդհանուր բնույթ ունենա։ Այդ հանգամանքը, իհարկե, բացատրվում է նրանով, որ ինքը Դոդոխյանը միշտ Սիմֆերոպոլում ապ-

րելով, միայն Ղրիմի հայ գաղութի կյանքին է հատկապես լավ ծանոթ եղել ու տեղական հայ հասարակության մասնը խնդիրներով հետաքրքրվել — տեղի եկեղեցին, վարժարանը, ուսուցիչներն ու հոգաբարձությունը, հասարակության վարքն ու բարքը, կյանքն ու գործունեությունը, և այլն։

Ղրիմի բարբառով գրվածքները Երգիծաբանական են և շոշափում են ընդհանրապես Ղրիմի և մասնավորապես Սիմֆերոպոլի հայ հասարակության վարք ու բարքի արատավոր կողմերը, իսկ գրական լեզվով գրվածքները մանր-մուկ բաներ են, նվիրված գլխավորապես իրեն շրջապատի բարեկամներին, ծանոթներին ու մերձավորներին։ Շատ քիչ բան է մնացել, որ իր անձնականից դուրս, նվիրված լինի ընդհանուր խնդիրներին։

Կյանքի ուրիշ պայմաններում Դոդոխյանի գրիչը, գուցե, ավելի բեղմնավոր լիներ, ա-

\* ) Այս շորս առից կազմված ուսանավորը գրված է նրա թղթերի մեջ պահպանված մի այցետոմսի վրա, որի մյուս երեսին տպագրված է ռուսերեն նրա անունն ու ազգանունը «Георгий Феодорович Додохов»։

վելի մեծ թուրք ունենար, բայց Ղրիմի հայ հասարակության լծացած ու ճահճացած կյանքի պայմաններում նրա գրչի թուրքն էլ թուլացել ու կորցրել է իր թափն ու կորուսել: Միջավայրը ուժգնապես ազդել է նրա վրա, դնելով իր կնիքը նրա ստեղծագործության վրա և դատապարտելով նրա գրիչը որո-

շումներ անելու նեղ ասպարեզում, անուշ շահերի շրջանում:

Ավելորդ շնք համարում այստեղ մեջ բերել նրա թարգմանական անտիպ գրվածներին, իբրև նմուշ, կերմոնտովի «Մարգարե»-ի թարգմանությունը, որ, կարելի է ասել, պատկանում է նրա կիսամշակ թարգմանությունների շարքին:—

- 1) Այն օրից, երբ ինձ Անհր տվեց  
Ընդունակություն մարգարության,  
Մարդոց աչքերում բնեղնում եմ ես  
Թերթեր ախտերու, քերթեր շարության:
- 2) Հազիվ սկսեցի քերմեռանդ խոսել  
Ես նշմարության և սիրո բաներ,  
Մերձավորներս սաստիկ կատաղած,  
Իսկույն ճեմեցին իմ վերա փառեր:
- 3) Ես գլխուս վերա ցանկցի մոխիր,  
Փախա փաղափից, իրև մուրացկան,  
Ահա՛ ապրում եմ ես առապատում  
Աստուծո տուրֆով քոչունի նման:
- 4) Ինձ հլու են անդ երկրի աւառած,  
Տիրոջ պատվերը հաստատ պահելով,  
Եվ լսում են ինձ պայծառ աստղերն  
Երկնականաբից պայծառ փայլելով:
- 5) Իսկ երբ բազմամարդ փաղափի միջից  
Ես ճեպ փայլեցի անցնել եմ վազում,  
Այդ ինքնահավան ծերերը, մանկանց  
Ինձ ցույց են տալիս և ժպտով ասում:
- 6) «Նայեցե՛ք, ահա՛ ձեզի օրինակ,  
Իր հպարտությամբ մեզանից գատված,  
Խեղճ մեզ կամեր հավատազենել  
Որ դրա քերանով խոսում է Աստուած»:
- 7) «Նայեցե՛ք, մանկունք, լավ դրա վերա,—  
Ի՛նչպես վտի՛տ է, դժգո՛ւյն ու տրտո՛ւմ  
Տեսե՛՛ք, ի՛նչպես աղֆա՛տ է ու մե՛րկ,  
Ի՛նչպես են մարդիկ երան նախատու՛մ\*)

\*) Համեմատության համար դեռում ենք այստեղ մանուկունքը, որ սպառնում է նրա «Բոս քան Ազնիվանգր Մատուցանի նույն «Մարգարե»-ի թարգմանությունները-ի առաջին գրքուկում:

Այն օրից, երբ Տերն հավերժ, երկնավոր  
Ինձ մարգարեի պարզեց շնորհ,  
Ես խոր կարգում եմ, կարգում էլ առ էլ,  
Արատ ու շարիք մարդկանց աչքի մեջ:

Ես օկսեցի փառքն մարդկան  
Ե՛վ սեր, և՛ ուսմունք սուրբ նշմարության

Ահա մի նմուշ էլ նրա Ղրիմի բարբառով գրած անտիպ գրվածքներից—

# ՏԵՐ-ՐԱՐԱ

Մեր տեր-բաբան քերե հազաց,  
Միտին մեքեն ասպես ասաց.  
«Այս բանեն ալ, կեցիր, հելե,  
Ինչալա մեկ յագմա կեկե:

Աստուած լուսավորե հոգին  
Հաս ու յհաս հեճարողին  
Թե շրլլային յեղիտ պորտեր,  
Տուն կամ խանութ— ո՛վ:

Օսկին կր հասցունե, կասին ,  
Հավատացե՛ք է՛նկ շրհասին.  
Անոր համար կուտան համին  
Կոնսիստորի սեկրետարին:

Երբ որ եկավ շապիկ շուներ,  
Շինոր ունի քարե տուներ  
Գիտեմ, կասե, հաշող շատ կա,  
Հաճերս յէ, Աստուած վկա:

Խելով խոսքեր ունի նա շատ.  
Կուգե՛ս, կասե, բլալ աղբատ,  
Կուգե՛ս, բլալ կրտակդ ծակ,  
Անպեսե՛նք էղիր յիտակ:

Բայց գիցված իմ դեմ իմ մեքավորներ,  
Մոլեցին վերաս նետեցին քարեր:

Մոխիր ցանկցի գլխիս— ու աղբատ  
Ես քաղաքներից փախա անապատ.  
Այնտեղ ապրում եմ զոհունակ կյանքով,  
Որպես քրոջուներ— Տիրոջ քարիքով:

Այնտեղ Բարձրյալի պառուները ոլահած,  
Ինձ խոհարհվում է ամեն տառած  
Այնտեղ ե՛մ աստղեր եքերի միջից  
Խնդազին փայլով ունկնդիր եմ եմ:

Բայց երբ անցնում եմ արագ քաղիքով  
Ես աղմուկայից քաղաքի միջով,  
Ցույց տալով վերաս՝ ինձնասեր, սիգունե՛  
Ժրպատում եմ ծեծեմ ու ասում մանկա՛ց.—

«Նայեցե՛ք, անա՛ ձեզ լավ օրհակ,  
Գոռո՛ղ է՛ր. մեզ հետ չը վարեց հաշտ կյանք,  
Անմիտե ուզում էր համազիլ մարդկանց,  
Որ հորս լեզվով խոսում է Աստուած:

«Նայեցե՛ք, որդիք, դո՛ւք հորս վերա,  
Ինչպես ե՛մ մոռ՛յլ, ե՛զ ցունա՛տ է նա,  
Ինչպես նիհա՛ր է, մե՛րկ, անօգնակա՛ն,  
Ինչպես ամենքն էլ ասո՛ւմ եմ հորան»:

Հապա կուգի նոմայ փարա,  
Ամեն շեխա ֆենդիր արա՛:  
Կարճը՝ վարպետ մարդ է պերեր,  
Նորա խելին չի կա երեր.

Էրկան ապրի սեփեքարը,  
Մի, ծաղկի կյանքին ծառը:

Ահա մի նմուշ էլ գրական լեզվով նրա գրած և ընդհանուր բնույթ կրող անտիպ գործերից.—

#### ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ

Մայրենի լեզուն օտարին փոխել,  
Պարկեշտությունը ռոֆի տակ կոխել,  
Ազգի անցյալը անխիղճ մոռանալ—  
Ա՜յդ է, ինձ ասե՛ք, ա՜յդ է զարգանալ:

Օգտավետ գործի խելք, միտք չի մաշել,  
Այլ անգործ քրիվ գալ, պապիրոս փաշել,  
Հանդեսներու մեջ կուրծքերը բանալ—  
Ա՜յդ է, ինձ ասե՛ք, ա՜յդ է զարգանալ:

Չունենալ կյանքում մի սուրբ գաղափար,  
Այլ սիրել լոկ գարդ, կերուխում և պար,  
Ազգի ցավերը յուզել իմանալ—  
Ա՜յդ է, ինձ ասե՛ք, ա՜յդ է զարգանալ:

Լոկ գարդ ցույց տալու ժամը հաճախել,  
Անդ աղոթքի տեղ խոսել, ծիծաղել,  
Սուրբ խորհուրդներից բան չի հասկանալ—  
Ա՜յդ է, ինձ ասե՛ք, ա՜յդ է զարգանալ:

Հիմունք ազգության— լեզու և հավատ,  
Պաճիր սրտիդ մեջ, հայ բուրիկ, հաստատ,  
Օտարին լավեն միշտ փաղե՛ք օգուտ,  
Բայց «Էներ» բող շատ մոտ լինի հոգուդ:

Դոդոխյանի մահից հետո ապագրված և նրա թղթերում պահված անտիպ գրվածքների մեջ թեև կան մի քանիսը, ինչպես, օրինակ, մեր մեջ բերած «Նուշիկ», «Հուսահատություն», «Գ. Արծրունու անմահ հիշատակին» և մյուսները, որոնց մեջ համեմատաբար երևում են և՛ ուսանավորի սահունություն, և՛ խոր զգացմունք, բայց և այնպես և ոչ մեկը ներանցից, յուր բանաստեղծական տրակով, չի կարող համեմատվել նրա անդրանիկ գրվածքի՝ «Թիծեռնակ»-ի հետ, որն իր պարզությամբ, արտահայտած գաղափարով ու անբռնադրոսիկ զգացմունքով գերազանց ու բարձր է բոլորից: Ահա հենց այս է եղել զբոսավոր պատճառը, որ այդ երգի լույս տեսնելուց և հայ ժողովրդի մեջ ընդհանրապես հետո, շատերի մոտ կասկած է ծագել նրա Դոդոխյանի գրչին պատկանած լինելու մա-

սին, և մինչև այսօր էլ այդ կասկածները փարատված չեն լիովին:

Արդ, տեսնենք, թե ի՞նչ պայմաններում և գրվել այդ երգը և ո՞րչափ ճշմարիտ են ծագած կասկածները:

Նախ, այժմ մեզ հայտնի «Թիծեռնակ»-ը պահպանել է արդյոք յուր սկզբնական խմբագրությունը, ինչպես որ նա դուրս է եկել հեղինակի գրչի տակից, թե՛ հետո նրա մեջ փոփոխություններ են արվել ուրիշների ձեռքով:

Երկրորդ, «Թիծեռնակ»-ը իսկապես Գեղարք Դոդոխյանի գործն է, թե՛ Ներսես Առաքելացու, կամ Վահան Ասկարյանի: Երրորդ, եթե «Թիծեռնակ»-ը Գեղարք Դոդոխյանի գործն է, ինքնուրույն գրվածք է, թե՛ փոխ առնված կամ ընդօրինակված մի ուրիշ օտար հեղինակից:

1904 թվի ապրիլի 17-ին ղրդմցի Սիմեոն Բաթիյանը տեղնվել է Դոդոխյանի հետ և խոսակցություն տնեցել այդ ժամանակ «Տարազ»-ի մեջ «Միծեռնակ»-ի գրվելու հանգամանքների առթիվ լույս տեսած հոդվածների և հայտնած կարծիքների մասին: Դոդոխյանն այդ մասին հաղորդել է նրան, թե

Շուտով սառ հողի տակ  
կը պառկեմ այստեղ մեռակ,  
Թողնելով հօրս սրտում  
Միշտ գավալի հիշատակ:

Վեցերորդ տունը փոխած է եղել այսպես.—

Ցերեկը ինձ համար  
Լույս արևն է խավար,  
Գիշերն էլ քաց աչքիս  
Չէ գալիս բուն քարեհար:

Վերջին տունը փոխած է եղել այսպես.—

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, գեա՛ արագ,  
Դեպ Հայոց աշխարհը,  
Մեռած տեղս Աշտարակ:

Նախավերջին տան երրորդ տողի «ես»-ը ուրիշների փոփոխություն է, ինքը գրած է եղել «զերք»:

«Միծեռնակ»-ը, ինչպես հայտնի է, առաջին անգամ լույս է տեսել «Գամառ-Քաթիլ»-այի արձակ և լափաբերական աշխատություններ»-ի երրորդ տետրակում 1856 թվին. հետո նա նույնը և նույն թվին անփոփոխ մտցրել է յուր «Հայոց ազգային երգերանգ»-ի մեջ. այդտեղից այն դարձյալ անփոփոխ արտատպվել է «Քնար Հայկական»-ում 1868 թվին և ընդհանրացել հետագայում հրատարակված հայ երգարաններում, դասագրքերում և ժողովրդի բերանում:

Միք. Միանսարյանի «Քնար Հայկական»-ի տպագրությունը արդեն վերջացած և հանձնված է եղել կազմարարին, երբ նույն 1868 թվի սեպտեմբերի 18-ին Պյատիգորսկ քաղաքից Պետերբուրգ է ժամանել Դոդոխյանը և հայտնել երգարանը կազմողին, որ «Ե՛րգ պանդուխտ պատանեկի»-ի հեղինակն ինքն է և որ ինքը նրա մեջ փոփոխություններ է արել: Միանսարյանը յուր երգարանի վերջում դրել է մի ծանոթություն,— «Առաջին ծանոթություն»,— որի մեջ հաղորդելով ընթերցող հասարակության Դոդոխյանի իրեն հայտնածների մասին, տպագրել է և նրանից ստացած փոփոխությունները:

Արդ, ի՛նչ եզրակացություն կարելի է գալ այս բոլորից, եթե ոչ այն, որ Դոդոխյանը

ինքը «Խո՛տն» ներշնչված, միանգամից է գրել բոլոր «Միծեռնակ»-ն և առանց այն փոփոխությունների, որոնց երգը հետո ենթարկվել է ուրիշների ձեռքով: Նա մինչև իսկ ցույց է տվել և այն փոփոխությունները, որ ինքն է արել երգի մեջ. նա մի տուն ավելացրած է եղել.—

երգի սկզբնական օրինակը գրել է «միանգամից» և հետո արդեն ժամանակի ընթացքում նրա մեջ մտցրել է այս կամ այն փոփոխությունը: Աղեքսանդր Ռոտինյանը մինչև իսկ գաղափար չունի «Միծեռնակ»-ի «միանգամից» գրելու մասին. նա ասում է. «Յուր նշանավոր «Միծեռնակ»-ը Դոդոխյանը գրում էր երկար ժամանակ և փոփոխում էր, մինչև որ հասավ այն գրության, որ ունի ներկայումս», այսինքն տպագրվածը, ընդհանրացածը:

Այդ «միանգամից» գրված «Միծեռնակ»-ն է եղել, որ առաջին անգամ երգվել է Դորպատի ուսանողության հավաքություններում, այդ «միանգամից» գրվածն է եղել, որ Ռ. Պատկանյանը առաջին անգամ տպագրել է իր երրորդ տետրակում: Ասել է թե երգի սկզբնագիրն էլ հենց այն է, որ մենք այժմ ունենք մեր ձեռքին, և նրա մեջ ուրիշի ձեռքով ոչ մի էական փոփոխություն չի մտել:

«Միծեռնակ»-ի սկզբնական օրինակը անկասկած ունեցել է «Միծեռնակ» պարզ խորագիրը, իսկ Միանսարյանի «Քնար Հայկական»-ի մեջ և դրանից հետո տպագրվածների մեջ մենք տեսնում ենք այդ երգը տրպագրված «Ե՛րգ պանդուխտ պատանեկի» խորագրով: Չորրորդ տան առաջին տողը եղել է— «Ե՛րք տեսնես դու նորա», իսկ տպագրվածի մեջ հետագայում փոփոխվել է և դարձել «Ե՛րք տեսնես դու նորան»: Վերջին տունը եղել է—

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, զնա՛ արագ  
Դեպ Հայոց աշխարհը,  
Մնա՛ծ տեղս Աշտարակ:

Իսկ տպագրվածների մեջ մենք այժմ տեսնում ենք.—

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, բո՛ր արագ  
Դեպի Հայոց երկիրը,  
Մնա՛ծ տեղս Աշտարակ:

Ռ. Պատկանյանը, որ նույնպես Դորպատի ուսանող է եղել, լավ ճանաչել է Դոդոխյանին և անկասկած ճիշտ էլ տեղեկություն է ունեցել «Միծեռնակ»-ի գրվելու մասին, ու առաջին անգամ տրպագրելով յուր երրորդ տետրակում, ի՞նչ նպատակով կարող էր այս կամ այն փոփոխությունը մտցնել նրա մեջ:

Այստեղ միայն խնդիր կարող է լինել այն մասին, թե ե՛րբ է Դոդոխյանը մտցրել կամ արել յուր վերոհիշյալ, առաջին անգամ Մ. Միանսարյանին և երկրորդ անգամ ավելի լիակատարորեն Սիմեոն Բաբխյանին հաղորդած, փոփոխությունները:

Հանգուցյալի թղթերի մեջ պահվել են «Միծեռնակ»-ի երկու սևագիր օրինակներ, որոնցից մեկը գրված է մի փոքր հնութունից խոնացած, դեղնած, 17 դարձ էջերից բաղկացած անկար տետրակում, մի քանի ուրիշ ոտանավորների սևագրությունների հետ միասին, մյուսը մի երկթերթ, աշակերտական սովորական տետրակի չափ, թղթի վրա, որի առաջին թերթի երեսի վրա գրված է «Մադրալի ցանկություն» թարգմանական ոտանավորը, իսկ երկրորդի վրա — «Միծեռնակ»-ը:

«Միծեռնակ»-ի առաջին օրինակը բռնում է մեր հիշած տետրակի 2-4 էջերը. նրանից առաջ գրված են երկու կտոր թարգմանության սևագիր՝ Հայնեից: Ինչպես «Միծեռնակ»-ը, նույնպես և մյուս ոտանավորները,

բոլորն էլ սևագրություն են, շատ տեղ գրչու ու մատիտով ջնջված և փոփոխված: Առաջին երկուսը, Հայնեից արած թարգմանությունները, և «Միծեռնակ»-ը անթվակիր են, իսկ

մյուսները՝ բոլորն էլ գրված են 1859—60 թվականներին Դոդոխյանի կողմից: Այստեղ ևս տեսնում ենք օրինակը նույնպես անթվակիր է, բայց նրանից առաջ գրված հիշյալ «Մադրալի ցանկություն» ոտանավորը յուր տակը նշանակած ունի 1860 թ. 24/1 Դորպատ:

Արդ, ի նկատի առնելով, որ «Միծեռնակի» «միանգամից» գրած բնագիրը, ինչպես ինքը Դոդոխյանն ասել է Միանսարյանին, գրված է 1854 թվի հունվարի 2-ին, և ի նկատի առնելով, որ տետրակի մեջ այդ երկու սևագրին հաջորդող ոտանավորներն ու



Դեռագ Դոդոխյան

նրն 1859-60 թվականները և գրված են միևնույն հնացած դեղնած թղթի վրա, ունենալ մատիտով ու գրչով կատարված նույնատեսակ փոփոխություններ, կարծում ենք, դա սկզբնական «միանգամից» գրված բնագիրը չէ, այլ նրա մի երկրորդ փոփոխակի գրված մոտավորապես 1859 թվին կամ դրանից մի քիչ, բայց ոչ 1856 թվից, առաջին համեմատյան դեպս իսկական սկզբնագիր լինել չի կարող, որովհետև դրա մեջ կա այնպիսի փոփոխություններ, որ Դոդոխյանը յուր, Մ. Միանսարյանին և Սիմեոն Բաբխյանին, հաղորդածների մեջ իսպառ հիշում և հիշված փոփոխություններն

արված են զլիսավորապես մատիտով ու համեմատաբար նոր ժամանակի գործ են, որովհետև, և դա զլիսավորն է, եթե այդ սկզբնական բնագիրը լիներ և այդ շափով տարբերվեր տպագրվածից, անկարելի է, որ Դոդոխյանը 1856 թվից մինչև 1868 թիվը ձայն բարձրացրած շիններ ու բողոքած յուր հեղինակած երգի օտարի ձեռքով անգթորեն աղավաղված, փոփոխված լինելու մասին, թող լիներ այդ օտար ձեռքը մինչև իսկ Ռ. Պատկանյանինը:

Ինչ վերաբերում է երկրորդ սևագիր օրինակին, կարծում ենք, որ դա մի երկրորդ փոփոխակն է, գրված 1860 թվին և համեմալն դեպս ոչ առաջ նրանից: Երկրորդ փոփոխակն, առաջինի համեմատությամբ բացի մի քանի տարբերությունից, ունի այնպիսի խորագիր, որ շունի առաջինը և տպագրվածը (1856) — «Աշտարակցի պան-

դուխտի երգ»: Անկասկած է, որ այդ խորագիրը ավելացրած է հետո, և այն նպատակով, որ «ծնած տեղս Աշտարակ» խոսքերը խմատ ունենան և առաջն տոնվի ծագած կամ ապագայում ծագելիք թյուրիմացությունների:

Դնում ենք այստեղ երկու փոփոխակն էլ, որպեսզի պարզ լինի թե որքան մեծ է տարբերությունը տպագրվածի և դրանց մեջ և ակներև դառնա, որ օտար ձեռքն այդպիսի կերպարանափոխության չէր կարող ենթարկել բնագիրը: Այս էլ պետք է ասենք, որ այդ փոփոխությունները ոչ մի նոր միտք, ոչ մի նոր գիծ չեն ավելացնում, մտցնում տպագրվածի մեջ և կարծես, կարկատանի կամ, լավ է ասել, հեղինակի յուր գրած նախնական բնագրի արտաքին ձևը փոփոխելու ձգտման տպավորություն է թողնում:

#### ՄԻՄԵՆԱԿ

Միծեռնակ, ծիծեռնակ,  
Դու զարնան սիրուն բոչնակ,  
Դեպի ուր ինձ ասիր,  
Թոչում ես այդպես արագ:

Ա՛խ քոիր, ծիծեռնակ,  
Դու ուղիղ դեպ Աշտարակ  
Եվ այնտեղ քո բունդ  
Շինիր մեր կտուրի տակ:

Այնտեղ ավար  
Հայր ունիմ ես սգավոր,  
Որն որ յուր որդուն  
Սպասում է օրից օր:

Երբ տեսնես դու նորա,  
Ինձնից շատ բարե արա,  
Ասիր քող սուգ անի  
Սևաբախտ՝ որդու վրա:

Դու պատմիր, քե ինչպես  
Այստեղ խեղճ ու անտեր եմ ես  
Միշտ լալով ողբալով  
Կյանքս մաշվել է, եղել է կես:

(Թանաքով շնչած)  
Ինձ համար ցերեկը  
Խավար է լույս արեգը  
Գիշերն էլ քաց աչքիս  
Քունը մոտիկ չի գալիս

(Կողքին գրած)  
Ցերեկով ինձ համար  
Լույս արեւն է խավար  
Քաց աչքիս չի գալիս  
Գիշերը քուն բարեբար:

#### ԱՇՏԱՐԱԿՑԻ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Միծեռնակ, ծիծեռնակ  
Դու զարնան սիրուն բոչնակ  
Դեպի ուր ինձ ասիր  
Թոչում ես այդպես արագ:

Դու քոիր ծիծեռնակ  
Մնած տեղս Աշտարակ  
Եվ այնտեղ քո բունդ  
Շինիր մեր կտուրի տակ:

Հենց այնտեղ ավար  
Հայր ունիմ ես սգավոր  
Որ յուր խեղճ միակ որդուն  
Սպասում է օրից օր:

Երբ տեսնես դու նորա,  
Ինձնից շատ բարե արա՝  
Ասիր քող սուգ անի  
Սևաբախտ որդուն վրա:

Դու պատմիր քե ինչպես  
Այստեղ խեղճ եմ ես  
Միշտ լալուց ողբալուց  
Կյանքս մաշվել է եղել կես:

(Թանաքով շնչած)  
Ինձ համար ցերեկը  
Մութ է շրջում արեգը  
Գիշերն էլ քաց աչքիս  
Քունը մոտիկ չի գալիս:

(Կողքին գրած)  
Ցերեկով ինձ համար  
Լույս արեւն է խավար  
Գիշերն էլ քաց աչքիս  
Չի գալիս քուն բարեբար:

(մատիտով գրած)

Շուտով սառ հողի տակ  
Կը պառկեմ այստեղ մենեակ  
Խեղճ հորս սրտի մեջ  
Թողնելով դառ հիշատակ:

(մատիտով ջնշած)

Ասիւր որ չի բացուած  
Թռումեցա միայնացած  
Չեմք, ինչ ծաղիկ գեղեցիկ  
Հայրենի հողից գրկած

Տե՛, սիրուն ծիծեռնակ  
Հեռացիր, գեա՛ արագ  
Դեպ Հայոց աշխարհը՝  
Մընա՞ծ տեղս Աշտարակ:

«Միծեռնակ»-ը Դոդոխյանի գրչին չպատկանելու մասին առաջին անգամ մեր գրականության մեջ կասկած է հայտնել Միք. Միանսարյանը, որ 1868 թվին տպագրելով յուր «Քեմար Հայկական»-ը և զետեղելով նրա մեջ «Միծեռնակ»-ը, դրա տակը գրել է մի այսպիսի ծանոթություն. «Այս երգի հեղինակի մասին զանազան կարծիքներ կան: Ումանք կարծում են, թե հանգուցյալ երջանկահիշատակ Ներսես Ե էր սորա հեղինակը յուր Բեսարաբիա եղած ժամանակ. մյուսները այս երգը ընծայում են Դորպատու ուսանող հանգուցյալ Ասկարյանին, որ ավելի հավանական է. երրորդները ասում են, թե Դոդոխյանի հեղինակությունն է և այլն»:

Այդ երգը յուր բովանդակությամբ, ճիշտ է, ավելի պատշաճում է «Հայրենիքի պաշտպան» Ներսես Աշտարակեցուն, որովհետև նա է եղել, որ Պասկևիչի բանասերկությամբ, Երևանի ու Նախիջևանի խանությունները նվաճվելուց հետո, յուր հայրենասիրական գործունեության համար աքսորի է ենթարկվել ու տանջվել օտարության մեջ, ինչպես կարող էր տանջվել սիրելի հայրենիքից զոռով խլված, վտարված մի գերի, նամանավանդ որ երգի մեջ էլ դրված է «ծնած տեղս Աշտարակ» խոսքերը: Այո, այդ այդպես է, բայց չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ Ներսես Աշտարակեցին յուր կյանքում բազմահատոր նամակներ, թղթեր ու կոնդակներ գրած լինելով, չի գրել և ոչ մի ոտանավոր, որ նրա գրածները բոլորն էլ գրաբար են և ոչ մեկը զուտ աշխարհաբար, և այն էլ այնպիսի աշխարհաբար, որով կարող էր գրել այն ժամանակները միայն Դորպատցին կամ Դորպատի դպրոցի հոգով սնված մի այլ հայ երիտա-

(մատիտով ավելացրած)

Շուտով սառ հողի տակ  
Կը պառկեմ այստեղ մենեակ  
Թողնելով հորս սրտում  
Միշտ ցավալի հիշատակ:

(փակագծերի մեջ գրած)

Ասիւր, որ չի բացուած  
Թռումեցա մենացած  
Ինչ ծաղիկ գեղեցիկ  
Հայրենի հողից գրկած:

Տե՛ն սիրուն ծիծեռնակ  
Հեռացիր գեա՛ արագ  
Դեպ Հայոց աշխարհը  
Մընա՞ծ տեղս Աշտարակ:

սարդ և ոչ մի դեպքում Ներսես կաթողիկոսը: Մենք չենք կարծում, որ եթե նա երբեկցե մի այդպիսի բան գրած լիներ, դա անհայտ մնացած լիներ նրա բազմաթիվ բարեկամների և հիշատակություն պահված չլիներ այդ մասին նրա նամակներից մեկն ու մեկում և լույս աշխարհ դուրս գար նրա կյանքի վերջին, 1857 թվին, Պատկանյանի երգարանում, այն էլ անստորագրի ու առանց ծանոթություն:

Ինչ վերաբերում է «ծնած տեղս Աշտարակ» խոսքերին, որ ճիշտ որ սիմֆոնիզացի Դոդոխյանի գրչի տակ մի փոքր օտարոտի է հնչում, ինքը Դոդոխյանը միշտ բացատրել է, որ այդ Աշտարակ անունը նա գործ է ածել ոտքի, հանգի համար միայն: Յուր երկրորդ փոփոխակի մեջ, ինչպես մենք տեսանք, այդպիսի թյուրիմացությունների առաջն առնելու համար, նա յուր այդ երգը խորագրել է «Աշտարակցի պանդուխտի երգ» խոսքերով:

Վահան Ասկարյանը, որի գրչին երգի պատկանելը Միանսարյանը հավանական է համարել, Դորպատի համալսարանի ուսանող է եղել և ժամանակակից Դոդոխյանին ու նրա մտերիմ և ամենասիրելի ընկերը: Նա ավարտելով լազարյան ճեմարանի դասընթացը, 1853 թվին մտել էր Դորպատի համալսարանը, երբ Դոդոխյանն արդեն այնտեղ էր և վերջինիս հետ ուսել է միևնույն «կամերալ» բաժնում: 1856 թվին ավարտելով համալսարանի դասընթացը, նա մնացել է Դորպատում, մագիստրոսի քննություն տվել ու պետք է աշխատեր Դորպատի համալսարանում իբրև դոցենտ, բայց 1858 թվին վախճանվել է թոքախտից և թաղվել Դորպատի

գերեզմանոցում: Դոգոխյանի ասելով, Ասկարյանն առաջինն է եղել, որ ուսանողական համաքույթներում իրենից հետո երգել է «Միծեռնակ»-ը հայտնի եղանակով: Դոգոխյանի թղթերի մեջ պահպանվել է մի թղթի

կտոր, որի վրա կա հետևյալ քառատող ոտանավորը, իբրև ընկերական սիրո արտահայտություն, ձոնված յուր սիրելի ընկերոջ հիշատակին.—

Հեռու, հեռու կա միակ գերեզման,

Հողն բլուր բլուրովին անգարդ.

Նորա վերա չի կա լացող մեկ մարդ

Մեջն է հանգչում խեղճ Ասկարյան վաճան:

Թեև Միանսարյանը հաստատ չի ասում, այլ միայն հավանական է համարում երգի նրա գրչին պատկանելը, բայց մենք չենք հասկանում, թե ի՞նչն է հիմք ծառայել այդ «հավանականությունը»։ մենք, գոնե, չգիտենք և մեր գրականության մեջ էլ չենք հանդիպել, որ այդպիսի հավանականության որևէ հիմք կամ պատճառ եղած լինի. զանազան ենթադրություններ այդպիսի հավանականության հիմք չեն կարող ծառայել և չպետք է էլ ծառայեն: Հանգուցյալ Վահան Ասկարյանը մինչև իսկ աշտարակցի էլ չի եղել, որ հնարավոր լիներ գոնե, այդ պատճառով նրան «Միծեռնակ»-ի հավանական հեղինակը համարելու նա վաղարշապատցի էր: Բժիշկ Լևոն Տիգրանյանը յուր, մեր վերը հիշած, գրվածքում սխալմամբ նրան երեւանցի է համարել:

Սակայն ինքը Միանսարյանը յուր «Քնար»-ի վերջում դրած «Առաջին ծանոթություն»-ի մեջ հերքել է իր ասածները: «Սորանից,— այսինքն Դոգոխյանից, ասում է նա յուր ծանոթության մեջ,— խմացանք, որ երգ պանդուխտ պատանեկի— «Միծեռնակ, ծիծեռնակ» Գևորգ Դոգոխյանի սեփական հեղինակությունն է, գրված 2 հունվարի 1854 թիվ Դորպատ. եղանակն առած է բաշկիրեցիոց «Մակլաչկա, մակլաչկա» (լատափայտ) երգի եղանակից, որ Դոգոխյանը լսել էր Դորպատ եղած բաշկիր պատերազմողներից: Աշտարակն այս երգի մեջ, որ շատերին կարծել տվեց, թե երգի հեղինակն է Ներսես V (իբրև Աշտարակեցի) կամ հանգուցյալ Ասկարյանը (թեպետ վերջինը վաղարշապատցի էր), Դոգոխյանը գործ է ածել ուրի համար միայն»:

Արդ, ի նկատի առնելով այն կտրուկ հայտարարությունը, որ Դոգոխյանը արել է Միանսարյանին, Սեմեոն Բաբիյանին և Հովհաննես Սպենդիարյանին, և ի նկատի առնելով նրա ուսանողական ընկեր Աղեք-

սանդր Ռոտինյանցի վկայությունը ու տեսնելով նրա թղթերի մեջ երգի սեփական փոփոխակները, յուր ձեռքով գրված ու փոփոխված, մենք գալիս ենք այն եզրակացության, որ պետք է ապացուցված համարվի այն, որ «Միծեռնակ»-ը միայն ու միայն Դոգոխյանի գրչի արդյունքն է:

Անկարելի բան է, որ եթե այդ երգը Դոգոխյանի հեղինակությունը չլիներ, այլ Ասկարյանի կամ Դորպատի մի այլ ուսանողի, ժամանակակից ուսանողներից շատերը, որոնք, ի շարս այլ երգերի, ընդունել ու երգել էին այդ երգը իրենց ուսանողական համաքույթներում և զեռ կենդանի էին, երբ 1868 թվին այն Դոգոխյանի ստորագրությամբ տպագրվեց, չըողոքեին, եթե երգի հեղինակը նա եղած չլիներ, այլ մի ուրիշը:

«Միծեռնակ»-ի ինքնուրույն երկ չլինելու մասին կասկած են հայտնել շատ շատերը, բայց մեր մամուլի մեջ հատկապես այդ մասին խնդիր են հարուցել Հով. Թադևոսյանը և Վրթանես Փափազյանը: Առաջինը 1904 թվի «Տարազ»-ի № 13-ում գետեղած իր հոդվածում մեջ բերելով Ա. Վ. Կուցովի «Песня» ոտանավորը (Стихотвор. Москва 1901, стр. 20), որի մեջ երգիչը այրվելով յուր սիրուհու սիրուց, դիմում է սոխակին և խնդրում նրան թռչել, գնալ, յուր սիրուհու մոտ, նստել նրա լուսամտի տակ և պատմել նրան, թե ինչպես ինքը օտարության մեջ առանց նրան տխուր ու տրտում է անցկացնում իր օրերը, թաղամում ու թոշնում է դաշտում ծլած խոտի նման, թե ինչպես դիշերը լուսնյակը խավար է երևում նրան, իսկ ցերեկը արևը մթափած թվում: Թադևոսյանը ենթադրում է, որ Դոգոխյանը յուր «Միծեռնակ»-ը ընդօրինակել, կամ աղտաթարգմանել է Կուցովի «Песня» ոտանավորից և ցանկություն է հայտնում այդ մասին բացատրություն լսել իրենից, Դոգոխյանից:

## Ա. Վ. Կոլցով

Ты не пой, соловей  
Под моим окном  
Улети ты в лес  
Моей родины!

Полюби ты окно  
Души — девицы:  
Прощебечь нежно ей  
Про мою тоску...

Ты скажи, как без ней  
Сохну, вяну я,  
Что трава на степи  
Пред осенью.

Без нея ночью мне  
Месiac сумрачен,  
Среди дня без огня  
Ходит солнышко.

Без нея кто меня  
Примет ласково?  
На чью грудь, отдохнуть  
Склоню голову?

Без нея на чью речь  
Улыбнулся я?  
Чья мне песнь, чей привет  
Будет по сердцу?

Что ж поешь, соловей,  
Под моим окном?  
Улетай, улетай  
К душе — девице!

## Գ. ԴՈՂՈՒՅԱՆ

Միժեռնակ, ծիծեռնակ,  
Դու գարեան սիրուն բռնակ,  
Դեպի ուր, ինձ ասա՛,  
Քոչում ես այդպես արագ:

Ա՛խ, բոհր, ծիծեռնակ,  
Մեճձ տեղս Աշտարակ,  
Անդ շիճիր քո բունը  
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ավուր  
Հայր ունիմ սգավոր,  
Որ միակ յուր որդուն  
Սպասում է օրե օր:

Երբ տեսնես դու նրան,  
Ինձնից շատ բարե արա՛  
Ասա՛, բող նստի, լա  
Յուր անբախտ որդու վրա:

Դու պատմիր, քե՛ի նշպես  
Աստ անտե՛ր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով  
Կյանքս մաշումել, եղել է կես:

Ինձ համար ցերեկը  
Մուր է շրջում արեգը,  
Դիշերը բաց աչքիս  
Քունը մոտ չի գալիս:

Ասի՛ր, որ չի բացուած,  
Քառամեցա միացած,  
Ես ծաղիկ գեղեցիկ,  
Հայրենի հողից զրկած:

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացիր, բոհր արագ  
Դեպի Հայոց երկիրը,  
Մեճձ տեղս Աշտարակ:

Հովհաննես Թադևոսյանը Դոդոխյանի տալիք բացատրությունն անհրաժեշտ է համարել, որպեսզի մեր նորագույն գրականությունն ուսումնասիրողները չգիմեն ենթադրություններին, ինչպես այժմ մենք անում ենք հաճախ մեր հին գրականության վերաբերյալ: Նա յուր ենթադրությունը հավանական է համարել ի նկատի առնելով այն ոչ անհայտ հանգամանքը, որ Դորպատի ուսանողներից շատերը սովորություն են ունեցել իրենց նոր երգերը հորինելիս՝ թարգմանել կամ ընդօրինակել օտար հեղինակներից և աղբյուրները չհիշել, ուստի ենթադրում է, որ Դոդոխյանն էլ կարող էր այդպես արած

լինել:

Վրթանես Փափազյանն արձագանք տալով Թադևոսյանի այդ հոդվածին, նույն 1904 թվի «Տարազ»-ի №15-ում մի հոդված է գետեղել, որի մեջ Թադևոսյանի դիտողություններն ընդհանրապես իրավացի համարելով, ավելի հավանական է գտնում սակայն, որ «Միժեռնակի»-ի փոխադրությունը կամ ընդօրինակությունը եղած լինի ոչ թե Կուրցովից, այլ Բերանժեից, և մեջ բերելով Ֆրանսիացի բանաստեղծ «Les Hirondelles» ոտանավորը, ցույց է տվել նրա մի քանի տների նմանությունը մեզ «Միժեռնակի»-ին:

Captit au rivage du Maure,  
Un guerrier, courbé sous ses fers,  
Disait: Je vous revois,  
Oiseaux, ennemis, de hivers.  
Hirondeles, que l'espérance  
Suit jusqu'en ces brillants climats,  
Sans doute, vous quittez la France:  
De mon pays ne me parlez-vous pas?

Depuis trois ans je vous conjure  
De m'apportez un souvenir  
Du vallon où ma vie obscure  
Je berçait d'un dont avenir.

L'une de vous peut-être est née  
Au toit où j'ai reçu le jour;  
La, d'une mère infortunée  
Vous-avez dû plaindre l'amour,  
Mourante, en croit à toute heure  
Entendre le bruit de mes pas,  
Elle écoute, et puis elle p'eure.

«Միծեռնակի»-ի մասին, իբրև գեղարվեստական երկի ընդհանրապես, և նրա ուրիշի ազդեցությունն տակ գրված լինելու մասին մասնավորապես, կարծիք է հայտնել և հանգուցյալ գրականագետ Մամբրե Մատենյանը\*): Նրա կարծիքով «Միծեռնակ»-ը

Թողեր և՛ ու և՛ կեր մլխես ու աշգիս,  
Քանի որ ախ կանիմ, կու փաղուի հոգիս.  
Ղարիպի սիրտն է սուզ  
Ոչ զուր օրն գիտեմ, ոչ բոկիրակին...  
Գրեք և՛ մեջ բղբիս, քե հոս մեացի,  
Օրիկ մի օրն գաշես չր բացի.  
Սիրելիք, ձեզանե կարոտ մեացի:

Նա պարզ է, անկեղծ ու գեղեցիկ, ինչպես ոչ մի հայերեն երգ. նա սակավաժան է

Գերված Մավրիտանական փերում  
Մի պատերազմիկ, բեկեռած յուր շղթաների տակ,

Ասում էր.— Տեսնում եմ ձեզ դեռ ևս,  
Զմեռուան բշեմի բոշուններ,  
Միծեռնակներ, որ հուսալից  
Դալիս եմ այս պայծառ կլիմայի տակ.  
Անշուշտ Ֆրանսիայից եմ գալիս,  
Իմ երկրի մասին չեմ խոսիլ արդյոք:

Երեք տարուց ի վեր խնդրում եմ  
Ինձ մի հիշատակ բերել  
Այն երկրից, ուր իմ խավար կյանքը  
Օրորվում էր փաղցր ապագայով:

Ձեզնից մեկը գուցե ծնվել է  
Այն կտուրի տակ, ուր ես եմ ծնունել.  
Այնտեղ մի անբախտ մայր ունեմ ես,  
Որ ինձ օրերով ողբում է,  
Եվ մեռնելով, ամեն ժամ  
Կարծում է ռոֆերիս ձայնը լսել.  
Ականջ է դնում, հետո արտասվում:

գրված է հայ ժողովրդական երգի ազդեցությամբ ներքո. նրա հիմքը կազմում է «Կոռունկ»-ը. նա զարթեցնում է, ինչպես «Կոռունկ»-ը, նա նույն ժողովրդականությունն ունի, ինչպիսին «Կոռունկ»-ը.

է և շատ ազատ հանգեր ունի, ինչպես ժողովրդական երգերը.

Սարեր, ձորեր, հետ գացեմ,  
Իմ յարին համբա տունեմ  
Յար յարի հետ խոսելիս,  
Ականջ դրեմ, իմացեմ:

Նրա լեզուն այնքան պարզ է և ճիշտ աշխարհաբար, որ դժվար է հավատալ, թե գրված է հիսնական թվականներին (1854): «Արուսի արտասուք» մինչև իսկ շատ ավելի հնացած բաներ ունի իր մեջ, քան «Միծեռնակ»-ը. դրա մեջ միայն մի հնացած բան կա, «միացած», որ

գործ է ածված մենացած, մենակ մնացած բանի իմաստով, և այլն:

«Տարագ»-ում տպագրված վերոհիշյալ հոդվածների կապակցությամբ է նշել, որ մեր հիշած դրիմցի Սիմեոն Բաբիյանը տեսնելով Ռոդոխյանի հետ կտրուկ պատասխան է ստացել նրանից, թե ինքն է հեղինակն: «Միծեռնակ»-ը և միայն եղանակն է, որ փոխ է առել բաշկիրցի զինվորականների երգած ու նվագած «Մակաշկա, մակաշկա»

\* Տես Գեղարվեստ Գ. (Լոնյանի 1913 թ. № 5, էջ 150—152).

հրգի եղանակից՝

Կուցովի ու Բերանժեի ոտանավորների սյուժետով և մեր «Միժենճակ»-ի նման ոտանավորներ անկասկած շատ կարող են դնվել օտար գրականու-

թյունների մեջ, ինչպես օրինակ խաչակա գրականության մեջ, որից ավելորդ չեն համարում բերել այստեղ մի նմուշ, որն է բովանդակությամբ ու ոճով նույնպես նման է «Միժենճակ»-ին:

### Pietro Paolo Parzanese

#### ALLE RONDINI

A salutare le pletre  
Aure di primavera  
Di rondini una schiera  
Volando interno va;  
E forse rivedra  
La patria mia.

Andate, o brune rondini,  
Al bianco mio villaggio,  
Vedrete il veechio faggio  
All' aure frondeggjar.  
Con voi vorrei volar,  
O, rondinelle;

Voi rivedrete il placido  
Mio lago e la pineta  
Voi su per l'onda queta  
Veleggerete a vol.  
Ed io qui resto sol  
Qui resto solo.

Volate, nell' esilio  
Jo vivo, or son cinque anni,  
Né il ciel mi ha doto vanni  
Per potervi seguir:  
E qui deggio morir,  
O, rondinelle.

Deh; alcua il nido appendere  
Voglia al mio caro tetto:  
E un veechio poveretto:  
Vedendo lacrimar.  
Deh; il voglia consolar...  
E 'il padre mio.

Սակայն չենք կարծում, որ Դոդոթյանը թարգմանած լինի դրանցից մեկն ու մեկը, և այդ մասին մենք չենք կարող նրա հայտարարություններն ի նկատի չառնել: Այո, թարգմանություն չէ «Միժենճակ»-ը, այլ նմանողություն կամ զորեղ ազդեցություն

### ՊԵՏՐՈ ՊԱՈՒՈ ՊԱՐՏԱՆԵԶԵ

#### ՄԻՇԵՆՃԱԿԻՆ

Ողջունելու համար իմ բանոր  
Գարնանային հովերով  
Միժենների մի երամ  
Թռչելով անցավ շուրջանակի:  
Թերևս տեսնեն պիտի նրան՝  
Իմ հայրենիս:

Գնացե՛ք, ո՛րքույն ծիծեռներ,  
Դեպ իմ ճերմակ գյուղը.  
Կտեսնե՛ք այնտեղ իմ հին հանաքին՝  
Զնիյառների մեջ տերևազարդված:  
Ձեզ հետ կուզե՛ի թռչել  
Օ՛, ծիծեռնակներ:

Դուք կտեսնե՛ք իմ անդորր լճակը  
Նվ եղևնուտը.  
Դուք ալիքների վրայով  
Թռիչք կանե՛ք մեղմոսեն:  
Նվ ես այստեղ կմնամ մեճակ,  
Այստեղ կմնամ մեճ-մեճակ:

Թո՛ւք դուք. ես ախորի մեջ  
Ապրում եմ, հինգ տարի է ահա.  
Նրե երկինքը ինձ բևեռ տված լինե՛ր  
Կը հետևե՛ի ձեզ:  
Բայց այստեղ պետք է մեղմեմ,  
Օ՛, ծիծեռնակներ:

Դե՛հ, ի՞ր բայեր կարցած մեկը  
Գնա գտնի իմ սիրելի հարկը,  
Կտեսնի իմ խեղճ ծերունուն  
Արցունք թափելիս:  
Դե՛հ, մխիթարե լող նրան՝  
Իմ հորս\*):

տակ գրված: Անշուշտ Դոդոթյանը կարող

\*) Այս ոտանավորի բառացի թարգմանությունը կատարել է մեր բարեկամ բանաստեղծ Ավին Բաճակյանը և քննարկի հետ միասին հանձնել որի համար հայանում եմ նշան մեր շնորհակալությունը:

ցել կամ լսել է մի ալոպսիսի ոտանավոր և ուժեղնապես ազդվելով նրանից, նրա նմանողությունը հորինել է իր «Միծեռնակ»-ը, դնելով նրա մեջ հայրենասիրական բովանդակություն և տալով նրան օտարության մեջ տանջվող հայրենասեր հայի սրտի ղեղձունքի բնույթ:

Այստեղ խնդրի կարող է լինել միայն, թե հատկապես ո՞ր հեղինակից և նրա ո՞ր ոտանավորից կամ երգից է նա ազդվել ու նրա նմանողությամբ գրել յուր երգը: Կարծում ենք, որ այդ օտար երգը գտնելու համար էլ շատ

Маклачка, маклачка,  
Ты плавил, маклачка,  
На родимый сторона... և այլն:

«Մակլաչկա» նշանակում է լաստափայտ. վուդա գետի վրա բանող պանդուխտ բաշկիրը այդ խոսքերով դիմել է լաստափայտին, որ նա լողա, երթա յուր հայրենի երկիրը ու պատմե յուր հորը, թե ինչպես դառն է իր կյանքը և ինչ նեղություններ է կրում օտարության մեջ:

Այդ երգն ազդել է նրա վրա ոչ միայն իր եղանակով, այլ և բովանդակությամբ: «Ուսանողներս,— ասել է նա,— ամենքս էլ օտարության մեջ էինք ու նեղություն էինք կրում. երբ երգը տրամադրեց ինձ, ես տուն վերադառնալով, նստեցի ու բոլոր ներշնչված գրեցի միանգամից բոլոր «Միծեռնակ»-ը և գրելիս, այտերիս վրայով արտասուքներ էին գլորվում. հորս էլ շատ էի սիրում»:

Իսկ ի՞նչով պետք է քաջատրեւ «Միծեռնակ»-ի բովանդակության հետ միասին և նրա մեջ գտնված մի քանի խոսքերի ու դարձվածքների նմանությունը, օրինակ, հենց Կուլցովի դործածած խոսքերին ու դարձվածքներին: Այո, նմանությունն ակնհերե է, բայց անհայտ չպետք է լինի, որ միևնույն զգացմունքի արտահայտությունը տարբեր մարդկանց մեջ առաջ է բերում միևնույն արտահայտության ձևը, լեզվի միևնույն ոճերի ու բառերի դործածությունը: Մենք գիտենք, որ փոխառությունները լինում են զանազան տեսակ. մի երկ կարող է բառացի թարգմանվել, աչառ թարգմանվել, միևնույն բովանդակությամբ գրվել, նմանվել: Եվ նմանությունը կարող է մինչև իսկ հեղինակի կամքից անկախ էլ լինել: Հեղինակը կարող է մի ժամանակ կարդացած կամ լսած լինել մի որոշ բովանդակությամբ

հետո չպետք է գնալ Դոդոխյանն ինքն ասել է Միսեոն Բաթիյանին և Հովհաննես Սպենդիարյանին, որ ինքը սովորություն է ունեցել հաճախելու մի գերմանացու Bier-Halle-ն զարեշուր խմելու համար և ալոպսիս լսել է երկու, մեկը նվագող, մյուսը երգող, բաշկիրցի ռազմիկների «Մակլաչկա», մակլաչկա» երգը: Այդ երգի եղանակն այնքան դուր է եկել նրան, որ նա ցանկացել է իմանալ երգի իմաստն ու բովանդակությունը ու բաշկիրցիներն ազճատված ռուսերենով թարգմանել են նրան.—

երգ, բանաստեղծություն և մինչև իսկ մոռացած լինել և իր սրտի ու մտքի մեջ տպավորվածն արտահայտել բոլորովին անկախ, անգիտակցաբար, իսկ Դոդոխյանը յուր «Միծեռնակ»-ը գրելիս ստացած տպավորությունն արտահայտել է անմիջապես, յուր լսածի տպավորության տակ:

Այս բոլորն աչքի առաջ ունենալով, մենք գալիս ենք մի քանի վերջնական ու որոշ եզրակացությունների, որ կարող ենք ամփոփել հետևյալ կետերի մեջ.

1. «Միծեռնակ» երգը հասել է մեր ձեռքը յուր սկզբնական խմբագրությամբ, մի երկու աննշան և ոչ էական փոփոխություններով:

2. Դոդոխյանի թղթերի մեջ պահպանված «Միծեռնակ»-ի երկու սևագիր օրինակները փոփոխակներ են, գրված ու փոփոխված մոտավորապես 1859—60 թվականներին:

3. «Միծեռնակ»-ը Գևորգ Դոդոխյանի սեփական հեղինակությունն է, և ոչ Ասկարյանի կամ մի ուրիշի:

4. «Միծեռնակ»-ը յուր սյուժեով ու եղանակով բաշկիրական «Մակլաչկա», մակլաչկա» երգի նմանողությունն է:

5. Դոդոխյանը միայն մի «Միծեռնակ» չի գրել, այլ և ուրիշ ոտանավորներ, որոնցից մի քանիսը տպագրվել են նրա կենդանության ժամանակ, մի քանիսը նրա մահից հետո, մի մասն էլ մնում է անտիպ նրա թղթերի մեջ:

Ի վերջո դնում ենք այստեղ «Միծեռնակ»-ի այն օրինակը, որ ինքը Դոդոխյանը յուր հետո արած փոփոխություններով կամեցել է տպագրված տեսնել:

## ԱՇՏԱՐԱԿՏԻ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Միծեռնակ, ծիծեռնակ,  
Դու զարնան սիրուն բոչնակ,  
Դեպի ո՞ւր, ինձ ասա՛,  
Թոչում էս այդպես արագ:

Ա՛խ, բոհ՛ր, ծիծեռնակ,  
Մնած տեղս Աշտարակ,  
Անդ շինի՛ր քո բունը  
Հայրենի կոտորի տակ:

Անդ հեռու ալևոր  
Հայր ունիմ սգավոր,  
Որ միակ յուր որդուն  
Սպասում է օրից օր:

Երբ տեսնես դու նորա,  
Ինձե՛ից շատ բարե արա՛,  
Ասա՛, բող նստի, լա  
Ցուր անբախտ որդու վրա:

Դու պատմե՛, թե ինչպես  
Աստ անտե՛ր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով  
Կյանքս մաշուի, եղել է կես:

Ցերեկը ինձ համար  
Լույս արե՛ն է խավար,  
Դիշերն էլ բաց աչքիս  
Չէ՛ գալիս քուն բարեբար:

Ասի՛ր, որ չի բացուած  
Թառամեցա միացած,  
Ջերթ ծաղիկ գեղեցիկ  
Հայրենի հողից զրկած:

Շուտով սառ հողի տակ  
Կը պառկեմ այստեղ մենակ,  
Թողնելով հորս սրտում  
Միշտ ցավալի հիշատակ:

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,  
Հեռացի՛ր, գնա՛ արագ,  
Դեպ Հայոց աշխարհը.  
Մնած տեղս Աշտարակ: